## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**13.04.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/74 գնման պայմանագրի**

ք. Երևան «30» «06» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու)), մի կողմից, և «ԳԵՈՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Ամիրաղյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 13.04.2026 թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/74 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.6 կետը և Երևանի քաղաքի **Նոր Նորք** վարչական շրջանի կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի՝ **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի պատշգամբների հիմնանորոգման աշխատանքների** ժամկետը երկարաձգել մեկ անգամ 20 օրացուցային օրով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ** |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ԳԵՈՊՐՈԵԿՏ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, |
| ՀՀ ֆինանսների նախարարության | Զ. Անդրանիկի փ. 5/12 |
| գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900032000375 | ՀՀ 1570057459870100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 07616541 |
| Վ.Պապիկյան------------------------ | Մ. Ամիրաղյան------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |